

«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոն

Երեւան, հոկտեմբերի 9, 2008թ.

Մամուլի հաղորդագրություն

*«2008-2009 թթ. Մրցունակության համաշխարհային զեկույցի» համաձայն
Հայաստանն իր մրցունակությամբ 97-րդն է աշխարհի 134 երկրների մեջ*

«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնը, որպես Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ)՝ Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր, համառոտ կերպով ներկայացնում է «2008-2009 թթ. Մրցունակության համաշխարհային զեկույցում» (ՄՉԶ) հրապարակված տվյալները:

ՄՉԶ-ն աշխարհում լայնորեն ճանաչված եւ մեծ հեղինակություն վայելող ամենամյա հանդես է, որտեղ համեմատվում, գնահատվում եւ վերլուծվում են աշխարհի տարբեր երկրների տնտեսական մրցունակությունը եւ դրանց տնտեսական զարգացման վրա ներազդող գործոնները: Առաջին անգամ 1979թ.-ին հրապարակված այդ զեկույցն այսօր արդեն ներկայացնում է աշխարհի 134 երկրների տնտեսությունների մրցունակության վերլուծությունը: Հայաստանն արդեն չորրորդ տարին անընդմեջ ընդգրկվում է ՄՉԶ-ում:

ՄՉԶ-ում երկրները դասակարգվում են ըստ Համաշխարհային մրցունակության ցուցիչի (ՀԱՄ ցուցիչ): Այն երկրների մրցունակությունը գնահատող համապարփակ ցուցանիշ է և հիմնվում է ավելի քան 110 գործոնների գնահատականների վրա, որոնք իրենց հերթին խմբավորվում են ըստ մրցունակության 12 հեմասյունների (տես աղյուսակը): ՀԱՄ Դրանցով ամփոփվում են լայն ընդգրկվում ունեցող այնպիսի գործոնների վերլուծությունը, ինչպիսիք են երկրների մակրոտնտեսական կատարողականը, ինստիտուցիոնալ զարգացածությունը, առողջապահությունն ու կրթությունը, գործարարության կատարելագործվածությունն ու նորարարության իրականացման եւ կիրառման աստիճանը և այլն:

ՄՉԶ-ի վերլուծություններն ու համեմատությունները հիմնվում են. (ա) երկրների պաշտոնական վիճակագրական, ինչպես նաեւ միջազգային կառույցների հրապարակած տվյալների վրա, եւ (բ) դիտարկվող երկրներում տնտեսության տարբեր ճյուղերը ներկայացնող ընկերությունների ղեկավարների շրջանում անցկացված հարցումների արդյունքում ստացված տվյալների վրա:

2008-2009 թ.թ. ՄՅԶ-ի արդյունքները

Այս տարվա ՄՅԶ-ն ընդլայնել է իր աշխարհագրական ծածկույթը՝ ընդգրկելով ավելի մեծ թվով երկրներ. 134 երկրներ՝ նախորդ տարվա 131-ի փոխարեն: 2008թ.-ին ՄՅԶ-ի մեջ ներառվել են չորս նոր երկրներ (Բրունեյ Դարուսալամ, Կոտ դը Իվուար, Գանա և Մալավի):

Համաձայն ՄՅԶ-ի ՀԱՍ ցուցիչի դասակարգման՝ աշխարհի ամենամրցունակ երկրների առաջին եռյակը, ինչպես նախորդ տարի, ներկայացնում են ԱՄՆ-ն, Շվեյցարիան և Դանիան: Ամենամրցունակ երկրների առաջին տասնյակում են նաև Շվեդիան, Գերմանիան, Ֆինլանդիան, Սինգապուրը, Ճապոնիան, Կանադան և Նիդեռլանդները: ՄՅԶ-ի ՀԱՍ ցուցիչը չի ներառել վերջին միջազգային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունները, քանի որ զեկույցում օգտագործված ամենաթարմ վիճակագրական տվյալները ներկայացնում են 2007թ.-ի տարեկան ցուցանիշները, իսկ ընկերությունների ղեկավարների հարցումներն անցկացվել են մարտին:

Ըստ ՀԱՍ ցուցիչի դասակարգման, Հայաստանն իր մրցունակությամբ զբաղեցրել է 97-րդ տեղը աշխարհի 134 երկրների մեջ, նախորդ տարվա 93-րդ տեղի փոխարեն (131 երկրների մեջ):

Համաձայն ՄՅԶ-ի դասակարգման՝ այս տարի Հայաստանը տեղափոխվել է զարգացման առաջին՝ ռեսուրսների վրա հիմնված փուլից դեպի զարգացման երկրորդ՝ արդյունավետության վրա հիմնված փուլ անցման միջանկյալ փուլ: Այս խմբում ներառված են մեկ շնչի հաշվով 2.000-3.000 ԱՄՆ դոլար ՀՆԱ ունեցող երկրները, մասնավորապես, Ադրբեյջանը, Վրաստանը, Չինաստանը, Ղազախստանը, Յորդանանը:

Ընդհանուր առմամբ Հայաստանի մրցակցային դիրքը նախորդ տարվա համեմատ նկատելի փոփոխությունների չի ենթարկվել, այնուամենայնիվ, այն շարունակում է մնալ բավականին ցածր գլոբալ ենթատեքստում:

Հայաստանը շարունակում է համեմատաբար բարվոք դիրք գրավել աշխատուժի շուկայի արդյունավետության հենասյան առումով (45-րդ տեղ), որին հատկապես նպաստել է գործատու-աշխատող հարաբերությունների ազատականությունն ու ճկունությունը: Սակայն գործարար կատարելագործվածության առումով Հայաստանի դիրքը մյուս հենասյուների համեմատ ամենացածրն է (120-րդ տեղ), որը ցույց է տալիս հայկական ընկերությունների կողմից գործարարության կառավարման ժամանակակից ռազմավարությունների եւ գործառնությունների կիրառման ցածր մակարդակը:

Նախորդ տարվա համեմատ Հայաստանի դիրքերը բարելավվել են ֆինանսական շուկայի կատարելագործվածության, առողջապահության եւ տարրական կրթության, բարձրագույն կրթության եւ վերապատրաստման ոլորտներում: Սակայն մակրոտնտեսական կայունության, նորարարության, տեխնոլոգիական պատրաստվածության, գործարարության կատարելագործվածության, ապրանքների և աշխատուժի շուկաների արդյունավետության առումներով նկատվել է Հայաստանի դիրքի որոշակի հետընթաց:

Հայաստանի արդյունքներն ըստ ՀԱՄ դիրքը ձեւավորող 12 հենասյուների

ՀԱՄ ցուցիչի ձեւավորող 12 հենասյուները		ՄՀԶ 2008/09 Հայաստանի տեղը 134 երկրների մեջ	ՄՀԶ 2007/08 Հայաստանի տեղը 131 երկրների մեջ	Փոփոխու- թյունը
1	Ինստիտուտներ	96	96	→ 0
2	Ենթակառույցներ	90	87	↘ -3
3	Մակրոտնտեսական կայունություն	83	57	↘ -26
4	Առողջապահություն եւ տարրական կրթություն	97	99	↗ +2
5	Միջնակարգ եւ բարձրագույն կրթություն եւ վերապատրաստում	94	95	↗ +1
6	Ապրանքների շուկայի արդյունավետություն	110	104	↘ -6
7	Աշխատուժի շուկայի արդյունավետություն	45	40	↘ -5
8	Ֆինանսական շուկայի կատարելագործվածություն	107	110	↗ +3
9	Տեխնոլոգիական պատրաստվածություն	112	104	↘ -8
10	Շուկայի չափ	111	111	→ 0
11	Գործարարության կատարելագործվածություն	120	115	↘ -5
12	Նորարարություն	106	94	↘ -12

Հայաստանն այսօր կանգնած է երկրի մրցունակության բարձրացման լուրջ մարտահրավերների առջև, որոնց հաղթահարումը թույլ կտա պահպանել տնտեսական աճի ընթացիկ բարձր տեմպերը: Զարգացման մերկայիս փուլում Հայաստանի հիմնական մարտահրավերները կապված են մրցունակության միկրոտնտեսական հիմքերի զարգացման հետ, սակայն վերջին տարում ավելացել են նաև մակրոտնտեսական ռիսկեր: Մասնավոր հատվածի կողմից կատարելագործված գործարար ռազմավարությունների և գործառույթների, նոր տեխնոլոգիաների և նորարարությունների կիրառման ցածր մակարդակը լուրջ վտանգ են հայկական ընկերությունների համար: Մյուս կողմից, կառավարության առաջնային խնդիրներից են ռեսուրսների և ապրանքների շուկաներում առկա թերությունների վերացումը, կայուն մակրոտնտեսական միջավայրի եւ գործարարության զարգացմանն ուղղված ինստիտուցիոնալ դաշտի ապահովումը:

ՄՀԶ-ում Հայաստանին վերաբերող ավելի մանրամասն մյուսեր զետեղված են «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնի ինտերնետ կայքում <http://www.ev.am/global.htm>:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

«Տնտեսություն և արժեքներ»-ը մրցունակությունն ուսումնասիրող մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներով՝ կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ)՝ Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկերն է:

Հայաստանի ազգային մրցունակության զեկույց

2008թ. հուլիսին «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը առաջին անգամ հրատարակեց «Հայաստանի ազգային մրցունակության զեկույցը», որում համապարփակ ներկայացված են Հայաստանի տնտեսության մրցունակությունը, ոլորտի հիմնական մարտահրավերները և դրանց միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունը երկրի զարգացման ընթացքի վրա, ինչպես նաև լուսաբանվել են այն կարևոր լծակները, որոնց կիրառմամբ կարելի է բարձրացնել Հայաստանի միջազգային մրցակցային դիրքը:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը 2009թ. գարնանը հրատարակելու է ազգային մրցունակության երկրորդ զեկույցը: Այն, ի տարբերություն առաջինի, կունենա թեմատիկ ուղղվածություն և նվիրված կլինի Հայաստանի նորարարական ներուժի և ազգային նորարարական համակարգի համեմատական վերլուծությանը:

Հայաստանի Ազգային մրցունակության առաջին զեկույցի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի ինտերնետային կայքում <http://www.ev.am/ACR.htm>

Հասցե՝
Հովսեփ Էմին 123
Երևան, 0051
Հեռ. 0 10 21 97 40
Էլ.-փոստ. info@ev.am
www.ev.am